

ՍԵՌԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԲԱՅԱԾԱՆՑՆԵՐԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ

Բանասիր. գիտ. դոկտոր Վ. Դ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Բայասեուր հաստատունը քերականական կարգ չէ և չի ուղեկցում տվյալ քային այս վերջինի ողջ լեզվապատմական գործածության ընթացքում իբրև նրա մի անփոփոխ, կայուն հատկանիշ: Բայասեուր կապված է բայիմաստի հետ, իսկ բայիմաստը կենդանի լեզվի այնպիսի մի առանձնահատկություն է, որ ենթակա է փոփոխությունների, իսկ այս փոփոխությունների հետ զուգընթաց փոխվում է նաև բայասեուր: Ընթացքը կարող է հանգեցնել այն բանին, որ բայի հին իմաստը և ըստ այդմ նաև հին սեուր բոլորովին անհետանան լեզվից, ու դրանց տեղը զան բռնելու նոր իմաստն ու նոր սեուր: Բայց հաճախ հին իմաստին ու հին սեուրին զուգընթաց գործածության մեջ են մտնում նոր առաջացած իմաստն ու սեուր, և բայը դառնում է երկսեու:

Երկսեությունը, սակայն, հետևանք է նաև բայիմաստի որոշակի բնույթի: Կան բայեր, որոնց բայական իմաստը հնարավորություն է ընձեռում բային թե՛ մեկ և թե՛ մյուս սեուով կիրառվելու՝ անկախ տվյալ բայի իմաստային տեղաշարժերից: Այս պարագայում բայը որոշակի սեռակարգից զրկվում է և, նայած գործածողի լեզվաընկալման բնույթին, մեկ մի, մեկ մյուս սեուով է հանդես գալիս՝ առանց լեզվական խորթ արտահայտչության ու ընկալման, առանց քերականական կանոնադանցության:

Բայց երբեմն այսպիսի բայերը դառնում են պատճառ ու հիմք բայածեվերի փոփոխության ու նոր բայածեների առաջացման, բառակազմական տարբեր երևույթների գոյացման:

Լեզուները քերականական կարգերի արտահայտման համար սովորաբար ունենում են հատուկ ձևական ցուցիչներ, որոնցում որոշվում է այս կամ այն քերականական կարգը: Գրաբարի բայասեուի համար առանձին ձևական ցուցիչ չկա: Գրեմ բայը ներգործական է, իսկ նույնատիպ ննջեմ բայը չեզոք է: Աղամ բայը ներգործական է, իսկ նույնատիպ խաղամ-ը չեզոք է: Ուրեմն բայասեուր որոշվում է բայիմաստով և ոչ թե ինչ-որ ձևական ցուցիչով: Պետք է շմոռանանք նաև, որ ներգործականն ու կրավորականը այնուամենայնիվ իրարից տարբերվում են ձևական ցուցիչով: Հատանեմ բայը ներգործական է, իսկ սրա կրավորականը լինում է ռատանիմ: Բայց սա էլ ընդհանուր օրինաչափություն է. կան բայեր, որոնց ներգործականն ու կրավորականը կամ ընդհանրապես չեն տարբերվում և կամ այս կամ այն խոնարհման մեջ համընկնում են: Մինչև իսկ բացարձակ կրավորաձև բայը ներգործական նշանակությամբ է կիրառվում: Այսպես՝ ունիմ բայը կրավորականի ձևով ներգործական բայ է. հատանէի ձևից չենք կարող որոշել սեուր. իսկ ճանաչեմ ներգործական բայը անցյալ կատարյալում կրավորականի ձև ունի ներգործական նշանակությամբ՝ ծանեայ, ծանեար, ծանեալ...

Գրաբարի բայերի սեռային կարգի այս խառնաշփոթությունը արդյունք է Ե, ա, ի, ու խոնարհումների փոխադարձ ներթափանցման և ո խոնարհման

անհետացման, որին ենթակա բայերը անշուշտ անցել են մնացյալ մյուս խոնարհումներին և իմաստային տեղաշարժերին:

Դասական գրաբարը համենայն դեպս մեղ ներկայանում է մի այնպիսի վիճակով, ուր բայաստիզմը գերազանցապես որոշվում է բայիմաստով և ոչ թե որոշակի ձևական ցուցիչով: Սակայն մենք ենթադրում ենք, որ նախադասական շրջանում (V դարից առաջ) գրաբարի բայերի սեռերը ունեցել են կայուն ձևական ցուցիչներ. դրանք եղել են ե, ա, ի, ու, ո խոնարհիչ ձայնավորները:

Դասական շրջանի գրաբարի և խոնարհման բայերը մեկուկես անգամ ավելի են, քան մյուս բոլոր խոնարհման բայերը միասնաբար առած: Հիշյալ շրջանի և խոնարհման բայերը թվով մոտ մեկ հազար երկու հարյուր միավոր են կազմում: Այս ընդհանուր քանակից որոշակի չեզոք են միայն երկու հարյուր քսան բայ, այսինքն՝ ամբողջի միայն տասնութ տոկոսը, իսկ մնացած ութսուներկու տոկոսի մեջ մտնող բայերը ներգործական են: Թվաբանական այս փոքրիկ հաշվումը մեղ հուշում է ինչ-որ օրինաչափություն: Սա չի կարող պատահականության արդյունք հանդիսանալ: Այս երևույթի օրինաչափական լինելը ակնառու կդառնա, երբ ընթացքում քննենք նաև մյուս խոնարհումների բայերի չեզոքների ու ներգործականների հարաբերակցությունը, իսկ այդ հարաբերակցությունը բոլորովին հակադիր պատկերով է ներկայանում մեզ:

Ն խոնարհումը, ինչպես ցույց է տալիս վերը բերած մեր թվաբանական հաշվումը, հատուկ է եղել գրաբարի ներգործական բայերին: Եվ իսկապես, մեր հին լեզվի խոնարհման տարատեսակությունը ինչ-որ ինքնանպատակ և ինքնաբավ քերականական մի երևույթ չէ: Վերջիվերջո տարրեր խոնարհումների այս բաղմածությունը ինչի՞ համար, ի՞նչ նպատակով է ստեղծվել և ուղեկցել մեր լեզվին նրա բաղմադարյան գոյության ընթացքում: Ե, ա, ի, ու, ո ձայնավոր խոնարհիչները եղել են սեռացուցիչներ, և հետագայում խոնարհումների փոխադարձ ներթափանցումների, սեռային կարգի ու բայիմաստի սերտ փոխհարաբերության շնորհիվ այդ ձայնավորների, իբրև բայաստի ցուցիչների, դերը աստիճանաբար նսեմացել է: Զպեսք է մոռանալ նաև այնպիսի մի հանգամանք, որպիսին քերականական կարգի ու նրա ձևական ցուցիչի միմյանց ծածկելու բացառականության բացակայությունն է: Ե, ա, ի, ու, ո ձայնավորները բայաստի ցուցիչներ լինելու հետ կարող էին նաև քերականական այլ կարգերի համատեղումով հանդես գալ:

Մենք կարծում ենք, որ և խոնարհումը հատուկ է եղել ներգործական բայերին: Բացառությունները այնքան են եղել, որքան ամեն քերականական կանոն ունի իր առանձնակի շեղումները իբրև քերականության օրինաչափական մի երևույթ: Գրաբարի զարգացման ընթացքում և խոնարհման ներգործական բայերի մի մասը սկսում է չեզոք դառնալ: Այս չեզոքացումը կատարվում է ամենից առաջ այն բայերի հետ, որոնք գործողության իմաստի հետ համատեղում են նաև շարժման դրության, վիճակի գաղափարը: Սկզբնապես նրանց մեջ արդեն չեզոք բայերի նախադրյալների առկա են եղել, բայց շարահյուսական դործածության մակարդակի չեն հասել, և սեռացուցիչը այնքան կենդանի ու զորեղ է եղել, որ նրանց շարահյուսական գործառնությունը ընթացել է ըստ սեռացուցիչների: Հետագայում սեռացուցիչի թուլացման հետևանքով՝ դրանք աստիճանաբար շարահյուսական նոր գործածություն են ձեռք բերում:

այսինքն՝ կիրառվում են շեղոր բայերի խնդրառությունները: Առաջանում են երկսեռ բայեր, որոնց քանակը հետզհետե ավելանում է լեզվի մեջ: Ուրեմն է խոնարհումը, որ իր հավանական որոշ բացառություններով ներգործական բայերին հատուկ խոնարհում էր, երկփեղկվում է՝ ձևի և իմաստի պայքարի ընթացքում իմաստի զորեղացման ու հաղթանակի շնորհիվ: Չեղորացումը անշուշտ սկսվում է այն բայերից, որոնց իմաստի մեջ, ինչպես ասվեց, շեղորացման սկզբնական նախադրյալներ կային: Այնպիսի ներգործական բայեր, որպիսիք են՝ բուրեմ, գայլակլեմ, խոտորեմ, խուճապեմ, խռովեմ, ծվեմ, շտապեմ, զիջեմ, վախճանեմ, ազդեմ, աշխատեմ, ապրեմ, դրդուեմ, ծառալեմ, կազդուեմ, կարկամեմ, համարձակեմ, տագնապեմ և այլն, որոնք մեր այսօրվա ըմբռնումով մեծ մասամբ շեղոր են, դասական շրջանում արդեն բռնել էին շեղորացման ճանապարհը: Իրանց ներգործական նշանակությունը այնքան էր աղուացել, որ հենց հիշյալ ժամանակաշրջանում կազմվել են դրանց ներգործական նշանակությունը արտահայտող նոր բայական ձևեր, այսինքն՝ պատճառական բայեր: Ուրեմն ներգործական բայը շնորհիվ իր իմաստի ձևեր է բերում շեղոր նշանակություն ու շարահյուսական նոր կիրառություն, իսկ դրա ներգործական նշանակությունը արտահայտվում է նույնի նոր պատճառական ձևի կազմությամբ: Եթե սկզբնապես պատճառական բայերին զուգընթաց դրանք երբեմն կիրառվում են նաև ներգործական նշանակությամբ, դա արդեն միայն ժամանակավոր մի երևույթ է: Վերջիվերջո ներգործական կիրառությունը դատապարտված է մահվան, որովհետև շեղոր նշանակությունը ուժեղանում է, և ցայտուն ներգործականությունը արտահայտվում է պատճառականի ձևով: Եվ նայած լեզվի զարգացման հետագա ընթացքին, այդպիսի բայերը կամ լիակատար սեռափոխանցման են ենթարկվում և կամ մնում են իբրև երկսեռ բայեր:

Վերևում մեր բերած բայերի ներգործական նշանակությունների համար դասական շրջանում գոյություն ունեն պատճառական բայեր, հետագա շրջանում պատճառականներ են կազմվել նաև այլ բայերի համար, որովհետև է խոնարհման բայերի շեղորացման ընթացքը կանգ չի առել: Բավական է ասենք, որ այդ բայերը ճնշող գերազանցությամբ մեր այսօրվա լեզվական բնկալումով մեր նոր գրական լեզվում շեղոր են. այսպես օրինակ, շեղոր են աշակերտել, ազդել, աղմկել, աշխատել (նկատի չունենանք այդ բայի վաստակել նշանակությունը), բաբախել, դեղեկել, քնկրել, ծնկել, կակալել, խոտորել, խուճապել, կարկամել, ձգտել, կամակորել, կանգնել, հոսել, շտապել, նզնել, նենճերել, հոժարել, նահանջել, պատշանել, սայթափել, սատակել, վաճանել, տագնապել, փտել:

Բայերը ոչ միայն սեռափոխվում են, այլև, երբ սեռային հին նշանակությունը միագնվում և աստիճանաբար վերանում է, երբեմն գուրս են գալիս գործածությունից և կամ նոր ձևավորման են ենթարկվում, օրինակ՝ դասական շրջանի համարձակել, հաշտել, հնազանդել, վախճանել ներգործական բայերը շեղորացման զուգընթաց կրել են նաև որոշակի ձևափոխություն՝ դառնալով համարձակվել, հաշտվել, հնազանդվել, վախճանվել: Այժմ սրանց ներգործական կիրառությունը գրեթե մեռած է, չնայած մեր նոր գրական լեզվի բայակազմական սկզբունքներով պետք է որ այս բայերի հնագույն ձևերը կիրառվեն ներգործական նշանակությամբ, իսկ նոր կազմությունները (համարձակվել, հաշտվել...)՝ կրավորական ու շեղոր: Բայց որովհետև

ներգործությունը մթազնվել ու վերացել է, բնականաբար մեռել է նաև կրավորականությունը, և այս բայերը մեր նոր գրական լեզվում մնացել են միայն չիղոր նշանակությամբ, և սրանց ներգործականությունն ու կրավորականությունը արտահայտվում են պատճառական կազմությամբ:

Քննության նյութ դարձած վերոհիշյալ բայերը դասական գրաբարում միասեռ ներգործական բայեր են: Արդ՝ եթե միասեռ ներգործական բայերը ենթարկվել են շեղորացման, ապա երկսեռները պետք է որ այդ ընթացքը ավելի արագ և ավելի հեշտ որդեգրեին:

Մեր քննությամբ գրաբարի ե խոնարհման բայերից երկսեռ են՝ աղաչեմ, աղերսեմ, անեմ, ամբաստանեմ, այլագունեմ, անխայեմ, ապաշխարեմ, ապափնեմ, ապրեմ, աջողեմ, արգահատեմ, արշալեմ, արտասուեմ, ասագակեմ, ավացեմ, բարեգործեմ, բարեխօսեմ, բարեբարեմ, բասեմ, բխղեմ, բողբոջեմ, գուժեմ, դիտեմ, դիւրեմ, դիւրեմ, երանեմ, երկնեմ, գրաբանեմ, ղնթեմ, թխանեմ, թխեմ, ժտեմ, իշխեմ, խարդախեմ, խաբխափեմ, խաւարեմ, խնամակեմ, խնայեմ, խրախուսեմ, ծագեմ, կազդուրեմ, կանխեմ, կասեմ, կատակեմ, համբերեմ, հանդարտեմ, հնչեմ, ղողանջեմ, մեղադրեմ, մեծաբանեմ, մեքենայեմ, միաբանեմ, միջնորդեմ, մոգեմ, մտաբերեմ, մրմնջեմ, յաղթեմ, յահախեմ, յապաղեմ, յառաջեմ, յերկարեմ, յոլովեմ, յորդեմ, նախարանեմ, նաւապետեմ, նեղգավորեմ, նեղգեմ, ներեմ, շաղկրատեմ, շշնջեմ, շարախօսեմ, սայթափեմ, սպրդեմ, ստեմ, ստունգանեմ, վայելեմ, վաստակեմ, վիժեմ, տիրեմ, տրոփեմ, ցողեմ, փայլատակեմ, փայլեմ, փշեմ, ֆայլեմ, օգտեմ: Այս ավելի քան ութսուն բայերից մեր նոր գրական լեզվում չեղոր են՝ այլագունել, արշավել, արտասվել, բավել, բողբոջել, երանել, խաբխափել, ծագել, կատակել, հնչել, ղողանջել, միջնորդել, համառել, հապաղել, ննջել, սայթափել, սպրդել, տրոփել, փայլատակել, ֆայլել:

Ինչպես արդեն հիշատակվեց, ե խոնարհման բայերի սեռի շեղորացման ընթացքում դրանց ներգործականությունը սկսում է արտահայտվել պատճառական կառուցվածքով: Բայց քանի որ ե խոնարհումը ներգործական խոնարհում է, այն իբրև խոնարհման ձև հատուկ է ներգործական բայերին, ապա շեղորացող բայերը միտում են ձևափոխության, ձևազատման, այսինքն՝ անցնում են այլ խոնարհման տակ: Ստեղծվում է իմաստի ու ձևի հակասություն. սկզբնական քերականական իմաստի և ձևի համապատասխանությունը խախտվում է: Չեղորացած բայերը աստիճանաբար անցնում են շեղոր խոնարհումը հատկանշող ի, ա, խոնարհումների շարքերը: Եվ քանի որ ո՛չ իմաստի մթազնումն ու մահացումը և ո՛չ էլ մի խոնարհումից մյուսին անցումը չեն կատարվում միանգամից ու միաժամանակ, ապա ստացանում հե երկկերպ և նույնիսկ եռակերպ խոնարհվող բայերի շարքերը: Ուրեմն մի կողմից ե խոնարհման բայերի ներգործական նշանակության մթազնումն ու մահացումը վերականգնվում է պատճառական ձևերի կազմությամբ, մյուս կողմից էլ շեղորացած բայերի համար ե խոնարհման ձևական անհարիրությունը վերանում է՝ շեղորացած բայերի այլ խոնարհումների անցումով:

Այս սունչությամբ դասական հայերենը գտնվում էր խոնարհումների փոխանցման ու իաչաձև դարգացման մի շրջանում: Ոչ միայն մթազնվել էին բայածանցների արտահայտած քերականական կարգերը, այլև մեր բայերի խոնարհման բուն էությունը հանդիսացող խոնարհիչ ձայնավորների արտա-

հայտած քերականական կարգի, տվյալ դեպքում սեռի կարգի խառնաշփոթում էր սկսվել:

Կենդանի լեզուն այդպիսի խառնաշփոթման դեմ պայքարում էր զանազան միջոցներով: Ամենից առաջ է խոնարհման շեղոք կամ շեղոքացող բայերը անցնում էին ի խոնարհման շարքը: Պետք է նշենք, որ բայերը ե-ից ի-ին ավելի հեշտությամբ էին փոխանցվում, քան ե-ից ա-ին կամ ու-ին: Դա պետք է բացատրել հետևյալ հանգամանքներով. ե և ի խոնարհումները ունեն միևնույն անորոշ դերբայները, միանման բաղաժանցներ, դրանց խոնարհման որոշ ձևեր նույնն են և կամ աբղեն նույնացել են (անկատար, հրամայականի մի շարք ձևեր, ե խոնարհման կրավորականի և ի խոնարհման բացարձակ նույնությունը և այլն):

Դասական շրջանի ե խոնարհման 90 երկսեռ բայերի հետ կան մի շարք երկկերպ խոնարհվող շեղոք բայեր. այդ նշանակում է, որ հիշյալ շեղոքները ե խոնարհումից անցել են այլ խոնարհումների: Այսպես՝ ե խոնարհման շեղոք բայերից նաև ի-ով են խոնարհվում հետևյալները. ակնկոբիմ, ամբարշտիմ, ամբարտաւանիմ, անցանիմ (սա կասկածելի է), աշառիմ, արշաիմ, բնակիմ, բունիմ (բնավորվել), զագանիմ, գայթիմ, գուպարիմ, զիջանիմ, բագաւորիմ (կասկածելի), ժամանիմ (հաղվադեպ), ժուժկալիմ, խուսափիմ, ծաղկիմ, ծանակիմ, ծորիմ, փեստիմ, դօղիմ, մեծամտիմ, մոլորիմ, լամառիմ, լանգիմ, նմանիմ, նուաղիմ, պախիմ, պակառիմ, պայքիմ, պատահիմ, սխալիմ, սրտմտիմ, վրիպիմ, ցաւագնիմ: Այս ցանկի բայերի մի մասի համար մինչև իսկ ի խոնարհումը ավելի կանոնական է, քան ե խոնարհումը:

Եթե ե խոնարհումը ներգործական սեռին հատուկ խոնարհում է, ապա ա խոնարհումը նույնչափ կամ զուցե ավելի շեղոք սեռի բայերի խոնարհումն է: Դասական հայերեն ա խոնարհման բայերը թվով մոտ երեք հարյուր միավոր են կազմում: Սրանցից ներգործական սեռի բայեր են միայն 40-ը, այսինքն բոլոր բայերի միայն 13 տոկոսը: Հիշյալ ներգործական բայերն են՝ բամ, զգամ, զնդամ, ըղծամ, լամ, խնդամ, խոկամ, կարդամ, հաւատամ, ողբամ, հոգամ, որոնամ, որսամ, սգամ, վիրամ, տեղամ, աեղեամ, ցանկամ: Սրանք պարզ բայեր են, և մեծ մասը երկսեռ է, նույնիսկ ըստ իմաստի ու գործածության հաճախականության շեղոքությունը շատ ավելի ուժեղ է արտահայտվում սրանց մեջ, քան ներգործականությունը: Երկսեռ են՝ զգամ, զնդամ, լամ, խնդամ [մեծ մասամբ շեղոք, ընդամենը երկու անգամ է կիրառված ներգործական իմաստով. խնդացին զթաղաւորելն նոցա ի վերայ իւրեանց (Բուզանդ)], կարդամ, ողբամ, հոգամ, որոնամ, սգամ, աեղամ, տեղեամ: Ինչպես տեսնում ենք, բերված տասները ներգործական բայից տասնմեկ բայը երկսեռ է, և պետք է նշել նաև, որ սրանց շեղոք նշանակությունը շատ ավելի կենդանի է և ուժեղ: Մեր նոր գրական լեզվի մեջ անցած այս բայերից շեղոք են լալ, խնդալ, հավատալ, հոգալ, տեղալ: Ներգործական և շեղոք են՝ խոկալ, ըղծալ, ողբալ, որոնալ, զգալ, ընդ որում սրանց ներգործականությունը պայմանական է և ավելի ոճաբանական արժեք ունի: Ներգործական են՝ կարդալ, որսալ, ցանկալ, որ դարձել է ցանկանալ: Գործածությունից դուրս են եկել բամ, զնդամ, վիրամ:

Ա խոնարհման ածանցավոր բայերից ներգործական են՝ ամբառնամ, անգիտանամ, բանամ, բառնամ, բոկանամ, զոդանամ, զլանամ, ըղծանամ,

ընծայանամ, րանամ, իմանամ, լուանամ, խոստանամ, համբառնամ, մաւրանամ, մերկանամ, մոռանամ, մուրանամ, յղանամ, յղենամ, ուրանամ, ոտանամ, ցանկանամ: Այս ցանկից էլ մի քանի բայեր արդեն շեղորոթյուն են արտահայտում կամ գործածվում են նաև իրրև շեղորոթնր. համեմատիւ ամբառնամ, անգիտանամ, բոկանամ, ընծայանում [այս բայի ներգործակա- նը չի կիրառված. կա միայն կրավորականը, որից ենթադրում ենք, թե եղել է նաև ներգործականը. Յաստուածեղէն գրոց ամա վարդապետութիւն ընծայա- նայր (եղնիկ)], համբառնամ, մարբանամ, մերկանամ:

Ուրեմն՝ ինչպես ցույց են տալիս հաշվումները, ա խոնարհումը իր հեր- թին շեղոր սեռի բայերի խոնարհումն է. նրա տակ գնացող սահմանափակ ներգործական բայերի մի մասն էլ երկսեռ է և հաճախ շեղորոթյունը շատ ավելի ուժեղ է արտահայտվում դրանց մեջ, քան ներգործականությունը:

Ա խոնարհումը իրրև շեղոր խոնարհում դեպի իրեն է ձգում և խոնարհ- ման այն բայերը, որոնք շեղոր են կամ իմաստափոխության հետեանքով արդեն շեղորացել են: Ճիշտ է, այս ընթացքը մեծ դարգացում չունեցավ, բայց այնուամենայնիվ դասական շրջանի և-ով խոնարհվող մի շարք բայեր անցան ա խոնարհման և կենդանի մնացին իրրև ա խոնարհման բայեր. հա- մեմատիր. անգիտանալ, ընկերանալ, քնդալ, թռչկոտալ, ծանրանալ, հազալ, հաշալ, հեծեծալ, նշալ, մեծամտանալ, մոնշալ, հառաջանալ, հորդանալ, ոս- տոստալ, պշալ, տրտնջալ, ֆրքմնջալ և գուցե նաև մի քանի ուրիշներ. որոնք դասական շրջանում և խոնարհման բայեր են և մինչև այսօր էլ ոմանց համար և խոնարհման ղուգահեռները պահպանվել են. հազալ-հազել, հաշալ- հաշել, հեծեծալ-հեծեծել, թռչկոտալ-թռչկոտել, մեծամտանալ-մեծամտել: Անցման այս ընթացքը սկսվել էր գրաբարի դասական շրջանում: Ե խոնարհ- ման ամպարշտեմ, ամբարտաւանեմ, առաւօտեմ, զազանեմ, խլրտեմ, խղնեմ, ձառայեմ, կալաւեմ, փրփրեմ բայերը դասական շրջանում խոնարհվում են նաև ա խոնարհիչով:

Ա խոնարհումը դասական հայերենում խիստ հեղհեղուկ վիճակում է գտնվում: Այն ոչ միայն ենթակա է փոխանցումների ու փոփոխությունների մյուս խոնարհումների ազդեցությամբ ու ներգործությամբ, այլ ինքն իր մեջ, իր քերականական կարգերի ներքին փոխազդեցությամբ կրել է փոփոխու- թյուններ և գտնվում է խիստ անկայուն վիճակում:

Գրաբարի խոնարհման մեջ բայաձանցները հիմքերի տարբերակման հարցում հսկայական դեր են կատարում: Ըստ Մեյերի և խոնարհման պարզ բայերը ունեն ներգործակերպ խոնարհում, իսկ ածանցավորները՝ կրավորա- կերպ: Եթէ այս կանոնը հին ժամանակներում գործուն օրինաչափություն է եղել, ապա դասական շրջանում ա խոնարհման ածանցավոր և պարզ բայերի այդ կանոնը այնպես է խառնվել, որ նրանից գրեթե ոչինչ չի մնացել: Ըստ այդ կանոնի գողանամ բայի անցյալ կատարյալը պետք է լինի գողացալ (կրավորակերպ), իսկ կարգամ բայի անցյալ կատարյալը՝ կարդացի (ներ- գործակերպ): Այս երկու բայերի անցյալ կատարյալները իսկապես ճիշտ այդպես են: Սրանց համապատասխանորեն պետք է հետևեն նաև մյուս ածանցավոր ու պարզ բայերը, բայց որովհետև և խոնարհման պարզ բայերի մեծ մասը շեղոր է, ուստի դրանց ներգործակերպ խոնարհումը հեղաբեկվել է: Այս բայերի սևուային շեղորոթյունը փոխել է նրանց խոնարհման կերպա- լանքը: Ա խոնարհման ավելի քան 70 պարզ բայերից ներգործակերպ խո-

նարհումը անփոփոխ պահպանել են հետևյալ մի քանի բայերը. աղամ, ատեսամ, աճսամ, զնամ, զգամ, զովամ, լամ, խաղամ, խայտամ, խլուտամ, խնդամ, կամ, կառղամ, կեամ, հաւատամ, մնամ, ողրամ, ոռոտամ, տեղամ (տեղեամ), այսինքն՝ մոտավորապես քսան բայ, որ անում է ընդհանուրի 27 տոկոսը: Մնացած բայերից կրավորակերպ են խոնարհվում զքամ, ըղձամ, խիքամ, կաղամ, յուսամ, շնամ, սգամ, սոսկամ, տաղտկամ, հեղգամ, փուքամ:

Երկկերպ են խոնարհվում դողամ, եռամ, զեռամ, խիքամ, խոկամ, հոգամ, ոռսամ, չաճամ, սողառնամ, ցնծամ, ցանկամ, այսինքն՝ եթե սրանց գումարենք կրավորակերպ խոնարհվող բայերը, միասին կկազմեն գրեթե նույնքան, որքան և ներգործակերպ խոնարհվողները: Ուրեմն այն կանոնը, ըստ որի ա խոնարհման պարզ բայերը ենթակա են ներգործակերպ խոնարհման, զրկվել է իր հիմքից, որովհետև բացառությունները համարյա թե գերազանցել են օրինաչափությանը կամ հավասարվել են: Իսկ մնացած մոտ երեսուն բայեր դասական շրջանում անցյալ կատարյալի հիմքի որևէ ժամանակով չեն գործածվել, որպեսզի կարողանայինք որոշել նաև նրանց խոնարհման ընդհանուր պատկերը:

Ա խոնարհման բայերի այս խառնաշփոթությունը առաջացել է նաև մեկ այլ պատճառով: Ասացինք, թե ա խոնարհման ածանցավոր բայերը ունեն կրավորակերպ խոնարհում, որովհետև դրանք վերազանցապես շեղոք սեռի բայեր են և կազմված են ան ածանցով, որ մի բան լինելու դառնալու իմաստ է արտահայտում՝ այսինքն շեղոքության իմաստ: Ան ածանցի այս շեշտված ու այսօր էլ կենդանի շեղոքությունը տարածվում է նաև ա խոնարհման մի քանի պարզ շեղոքների վրա և դրանք փոխվում են ածանցավորների. ըղձամ, քալկամ, խոշտամ (ոտքերը տկարանալով կաղալ), խռխտամ, ծուլամ, պանծամ, տաղտկամ, տեճւամ, ցանկամ բայերը ունեն ըղձանամ, թալկանամ, խոշտանամ, խրխտանամ, ծուլանամ, պանծանամ, տաղտկանամ, տենչանամ, ցանկանամ զուգադիրները, որոնց մեծ մասը այսօր ավելի կենդանի է պարզ բայերի համեմատությամբ: Ածանցավոր այս զուգադիրները, ավելի կենդանի լինելով, իրենց կրավորակերպ անցյալ կատարյալը պարտադրում են պարզ բայերին, իսկ այս վերջինները աստիճանաբար կորցնում են իրենց ներգործակերպ անցյալ կատարյալը:

Այսպես՝ մի կողմից շեղոք լինելու հանգամանքը, մյուս կողմից ենթարկվելով ածանցավոր բայերի ուժգին ազդեցության՝ ա խոնարհման պարզ բայերը իրենց խոնարհման դիմադիծը աստիճանաբար կորցնում են, և դասական շրջանում ա խոնարհման պարզ բայերը խոնարհման տեսակետից մի տարօրինակ ու խառնակ պատկեր են ներկայացնում:

Բայց այն ենթադրությունը, թե զրաբարի ա խոնարհման պարզ բայերը ներգործակերպ խոնարհում ունեն, չի՞ խոսում այն մասին, որ այդպիսի օրինաչափությունը պետք է որ ընդհանուր լիներ բոլոր խոնարհումների համար: Այսինքն՝ եթե՞ ա խոնարհման պարզ բայերը ներգործակերպ են, պետք է այդպես լինեին նաև մյուս խոնարհումների պարզ բայերը: Ա խոնարհումը այդ բանը լիակատար կերպով հաստատում է: Սակայն անհրաժեշտ է սրան զուգահեռ մեկ այլ հարց ևս առաջ քաշել: Կրավորակերպ և ներգործակերպ քերականական հասկացությունները զուտ ձևական բնույթ են կրում: սրանք չէին կարող իմաստային հիմք չունենալ: Առնվազն ներգործակերպ խոնար-

Հումը գոնե հատուկ պետք է լինի ներգործական բայերին։ Ա խոնարհման խիստ ձևափոխությունները այնպես են խախտել այդ վիճակը, որ այս ուղղությամբ որևէ բան ապացուցել չեն կարող, մանավանդ որ պարզ բայերի շարքում ներգործականների հետ կան նաև չեղոքներ։ Այս կողմից շատ ավելի լավ են պահպանվել ու խոնարհման բայերը։ Ու խոնարհման պարզ բայերը բոլորն էլ գրեթե ներգործական բայեր են. դրանք են առաւելում, աւգելում, գելում, գերծում, գեղում, գենում, գերծում, քողում, լեզում, լեւում, լիզում, կասում, կարկառում, կիզում, հանում, հեղում, հիւսում, լառում, յաւելում, յեղեղում, յեռում, ստեղծում, ցելում, քերծում։ Ու խոնարհման պարզ բայերից չեղոք է միայն յառում բայը. սա արդյո՞ք պատահական մի հրեւելթ է, թե օրինաչափություն է։ Մենք կարծում ենք, որ սա մեր դրաբարի օրինաչափություններից մեկն է, եթե ե խոնարհումը ներգործական բայերի հատուկ խոնարհում է, բայց և ունի իր չեղոքները, ապա ա խոնարհումը, իբրև չեղոք բայերի խոնարհում, պետք է իր ներգործականները որևէ ձևով տարբերել չեղոքներից։ Այդ ներգործականները չեղոքներից տարբերվում են ներկայի հիմքում ածանց շունենալով, իսկ անցյալի հիմքում ներգործակերպ խոնարհումով։ Այս երկու հատկանիշների կորուստը ա խոնարհման բայերի մնչ մենք արդեն բացատրեցինք։ Ու խոնարհումը այդ երկու կարևոր հատկանիշները գրեթե լիակատար կերպով պահպանել է։ Ու խոնարհման պարզ բայերը ոչ միայն լրիվ ներգործական բայեր են, այլև անցյալ կատարյալի հիմքում պահպանել են ներգործակերպ խոնարհման ամբողջական պատկերը։ Իսկ ու խոնարհման ածանցավոր բայերը միայն չեղոք են (ներգործական են՝ առնում, ընկենում, լնում, խնում, ընթեռնում, զգենում)։

Որ ածանցավոր բայերը սովորաբար չեղոք են եղել, ապացուցվում է նաև չ, նչ ածանց ունեցող բայերով. թե՛ ու խոնարհման և թե՛ մյուս խոնարհումների բոլոր այն բայերը, որ ունեն հիշյալ ածանցները, չեղոք են. բացառություներ է կազմում միայն ճանաչեմ բայը։

Այս առնչությամբ անդրադառնալով ե խոնարհման բայերին, պետք է նշենք, որ դրանց ածանցավոր տիպարը պարզերի համեմատությամբ չնչին թիվ է կազմում։ Ե խոնարհման հազար երկու հարյուր բայից ածանցավոր են միայն 64 բայ, այսինքն՝ 5 տոկոս։ Բայց և դրանցից առոգանեմ, ոռոգանեմ, ողողանեմ, պղնեմ անցյալ կատարյալ չունեն։ Ընթերցանեմ, շոռոգանեմ (շփոքել) հաղվաղեպ են կիրառված և դարձյալ կատարյալի ձևեր չունեն։ Մեղանչեմ, ճանաչեմ, յանցանեմ գրեթե անկանոն են։ Անկանոն են նաև՝ յառնեմ, դնեմ, առնեմ։ Սունայնեմ (հառաչել) բայը միայն մեկ անգամ է կիրառված և պարզ չէ՝ որն է այս բայի արմատը, այդպես է նաև՝ ստնանեմ (կարողանալ) բայը։ Զկա նաև տարածանեմ բայի անցյալ կատարյալը։ Այս դրույթի օգտին է խոսում նաև այն հանգամանքը, որ մի քանի ածանցավոր բայեր բոլոր իրենց խոնարհման հանգամանքի վերածվել են պարզերի. այդպիսի բայեր են անգոսնել (արմատը անգոյս), կանգնեմ, շիկնեմ, սերմանեմ, և գուցե սրանց հետ նաև ուրիշները, որոնք խոնարհվում են իբրև պարզ բայեր։

Նկրակացություն. ա. գրաբարի խոնարհիչ ձայնավորները խոնարհման տիպարները պարփակելու հետ ծառայել են նաև իբրև սեռացուցիչ մասնիկներ և իբրև այդպիսին աղոտանալով նպաստել են խոնարհումների փոխանցմանն ու ներթափանցմանը։

բ. Ա խոնարհումը հիմնականում ներգործական բայերի խոնարհումն է։

զ. Բայաժանցները կերպային կարգին դուզընթաց արտահայտել են նաև սևոճի կարգը, այսինքն՝ հիմնականում եղել են շնչոք սևոճի ցուցիչներ։ Այդ են ապացուցում ա, ու խոնարհման բայերի ածանցավոր տիպարները, որոնց ավելի քան 90 տոկոսը շնչոք է, իսկ ու խոնարհման ոչ մի պարզ բայ շնչոք չէ։

դ. Ե խոնարհման ածանցավոր բայերը ամբողջ տիպարի մեջ մտնող բայերի միայն 5 տոկոսն են կազմում։ Սա ապացույց է այն բանի, որ Ե խոնարհումը իբրև ներգործական բայերի խոնարհում, մերժել է ածանցավոր բայերի ներթափանցումը, որոնք ըստ էության շնչոք պետք է լինեին։

Գրաբարի ե, ի, ու խոնարհման բայերի ածանցները ունեցել են սևուզաօճի ու կերպազատիչ դեր, բայց V դարում սրանց այդ դերը մթազնվել էր. դրանք միայն հիմքազատիչ պաշտոն ունեին, որ զուտ ձևական երևույթ էր. ներկայի հիմքում առկա ածանցները պարտադրաբար անցյալ կատարյալի հիմքում վերանում էին՝ առաջ բերելով երկու տեսակ հիմքեր, բեկանեմ (հիմք բեկան), բեկի (հիմք բեկ), մատչիմ (հիմք մատչ), մատեայ (հիմք մատի), առնում (հիմք առն), առի (հիմք առ)։ Ածանցավորները ներկայի հիմքն են, իսկ պարզերը՝ անցյալ կատարյալի։

Այս ածանցների մասին համեմատական քերականության կարծիքն այն է, որ դրանք նախապես եղել են միջամասնիկներ։ Աճառյանը գրում է. «Այն բայերը, որ պատկանում են այս տիպին (այսինքն ածանցավոր են), մեծ մասամբ համապատասխանում են հնիս. ոնգային միջամասնիկավոր ձևերին։ Միջամասնիկաձև ոնգականը արմատից դուրս է առնված և կցված է իբրև հետամասնիկ»¹։

Աճառյանը ոնգային միջամասնիկ ասելով հասկանում է մեր աճ, ն, ածանցների ն-ն (բեկանեմ, առնեմ)։

Հայերենի այս բայաժանցների միջնամասնիկ լինելը ապացուցվում է ցեղակից լեզուների նույն արմատների միջամասնիկությամբ. օրինակ՝ հնիս. iinq հայ. լիֆան փոխն. լիմֆ, bheng հայերեն բեկան փոխն. բենկ, bhung, հայերեն բուծան փոխն. բունծ, vind հայերեն գիտան փոխն. գէնտ (գտանեմ) և այլն։

Այս փաստերը այնքան ակնառու են, որ սրանց դեմ առարկել անկարելի է։ Սակայն միջամասնիկի վերջամասնիկ դառնալը հայերենում այնքան կատարյալ մի գործընթաց է եղել, որ միջամասնիկի ոչ մի օրինակ, ցավոք, չի մնացել։ Ամենայն հավանականությամբ դա կատարվել է դրափոխական մի խիստ ուժեղ օրինաչափությամբ, որտեղ ն-ն մյուս բաղաձայններից հետ է թռել և իբրև վերջամասնիկ ձևավորվել է աճ կապակցությունը. միջամասնիկ եղած ժամանակ ա չի եղել։

Բոլոր ե, ի խոնարհման բայերը չեն, որ ա հավելվածը ունեն. օրինակ՝ առնեմ, յառնեմ, դնեմ, լինիմ, տանիմ բայերը զուրկ են ա հավելվածից, ունեն միայն ն ոնգային մասնիկը։ Միայն ն ոնգային ունեն նաև ու խոնարհման բայերը։ Այս ոնգային ն և չ, նչ ածանցները վերջամասնիկի վերածվելու շրջանից էլ առաջ դարձել են սոսկածանցներ, իսկ սոսկածանցի իմաստադրկությունը անկարելի է դարձնում նրա հետագա կիրառությունը և այն էլ օտար փոխառությունների մեջ, ընդհակառակն՝ այդպիսի ածանցները աստիճանաբար ձուլվում են արմատի հետ և վերածվում մի ամբողջության և կամ

¹ 2. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատ. Ա, Երևան, էջ 347։

դուրս են ընկնում: Առաջին դեպքի համար արդեն դրարարում ունենք անգոսնել (արմատը անգոյս), կանգնեմ, շիկնեմ, սերմանեմ, որոնց անցյալ կատարյալները լինում են անգոսնեցի, կանգնեցի, շիկնեցի, սերմանեցի, փոխն. *անգոսի, *շիկի, *սերմի, *կանգի: Իսկ ածանցների կորուստ են հանդես բերում այն բայերը, որոնք արդեն հրկու ձևով են հանդես գալիս. օրինակ՝ տա-րածանեմ-տարածեմ, լիզանեմ-լիզեմ, զեղծանեմ-զեղծեմ, ներկանեմ-ներկեմ, ողողանեմ-ողողեմ, արծարծանեմ-արծարծեմ և այլն:

Այս մասնիկները կազմել են ներկայի բունը, ունեցել են կերպային սկսողական տեղական կամ մի այլ նշանակություն, որոնք, սակայն, դասական շրջանում մթաղնվել էին: Դասական շրջանում հիշյալ մասնիկները ունեին միայն մի ձևական նշանակություն՝ արտահայտում էին որոշ բայերի ներկայի բունը, իսկ շեղոթության և մյուս իմաստները մեռել էին:

Այն ժամանակ, երբ միջամասնիկ այդ ածանցները դարձան վերջամասնիկ, սրանց իմաստային կենդանի արտահայտությունը աստիճանաբար մթաղնվեց և դասական շրջանից դեռևս շատ առաջ այդ մասնիկները այլևս շեղոթության իմաստը չէին պահպանում, դարձել էին սոսկածանցներ, ինչպես այժմ բնակվել, վերաբերվել, համաձայնվել և մի քանի այլ բայերի մեջ վ ածանցը կրավորականի իմաստ չի արտահայտում:

Լեզվի մեջ այն ածանցները, որոնք մնացել են իբրև անցյալի մնացուկ՝ այսինքն իմաստավորվել են, այլևս ուրիշ որևէ բառի վրա դրվել չեն կարող: Անիմաստ լինելով՝ անիմաստ է ուրիշ որևէ բառի կցել դրանք: Ա խոնարհման բայերի ան ածանցը կենդանի ածանց է իր դառնալ, վերածվել նշանակություններով, ուստի վազր փոխառյալ բառից կարող ենք կազմել վազրանալ, բոսոր-ից՝ բոսորանալ, ստուար-ից՝ ստուարանալ, բայց հարկ իրանյան արմատի վրա չէինք կարող ան ածանցը դնել և ստանալ արկանել բայը, կամ կորի անծանոթ՝ արմատին ավելացնելնք նշ ածանցը կորնչիմ ստանալու համար:

Իրանական, ասորական, հունական, եբրայական և հայտնի բոլոր փոխառություններից առաջ այդ ածանցները մթաղնվել էին, ուստի և օտար փոխառություններին կցվել այդ ածանցները չէին կարող, մանավանդ դրանք նախապես միջածանց են եղել, իսկ միջածանց եղած ժամանակ էլ թեկուզ և կենդանի լինեին, նոր բայ չէին կազմի: Եվ իրոք, հայտնի բոլոր փոխառյալ բայերը պարզ են: Իրանական փոխառություններ են համարվում ազատեմ, աղղեմ, ախորժեմ, ամբարեմ, ապախուրեմ, ժամանակեմ, բաժանեմ, բաշխեմ, թշնամանեմ, պատասխանեմ և բաղմաթիվ ուրիշներ, որոնք բացարձակորեն անածանց են և ածանց չէին կարող ունենալ, որովհետև այդ բայա-ծանցները միայն հայերեն բնիկ բայերին էին պատկանում և սկզբնապես միջամասնիկ են եղել, ապա վերածվելով վերջամասնիկների՝ իմաստային մթաղնման են ենթարկվել. դժվար է ասել, թե այդ մթաղնումը երբ է տեղի ունեցել. գուցե դեռևս միջամասնիկ եղած ժամանակ դրանք արդեն զուտ հիմքատարբերիչ տարրեր էին, և մեր լեզվի պատմությունը ցույց է տալիս, որ փոխառյալ բառերը բայ դառնալով հիշյալ մասնիկավորմամբ չեն զինվել: Ածանցավոր բայ չկա նաև հունա-ասորական ակնհայտ փոխառությունների մեջ. ինչպես՝ բասրեմ, քարզմանեմ, խմորեմ, ծարրեմ, կեղևեմ, մեֆեմայեմ և այլն: Սրանց ապացույցները բաղմաթիվ ու բաղմաղան են: Ամենից առաջ դիմենք հաշվարկման: Գրարարի ե, ի, ու խոնարհման ածանցավոր բայերից 6 Հանդես, № 2

րստ «Արմատական բառարանի» բնիկ են անիծանք, անկանք (հյուսել), առնք, առոգանք, առածանք, առծարծանք, ագանիմ (հագնել), ագանիմ (գիշերել), ագագանիմ, ածանիմ, անկանիմ, առածանիմ, առընդունիմ, արքիմ, արքնում, ալանում, առնուլ, առնում, բեկանք, բուծանք, բուսանիմ, գտանք, դիգանք, դնք, ելանք, եղանիմ, երկնչիմ, երգիծանք, զառածանիմ, զաաչիմ, զանգանք, զարկանք, զերծանք, զարքնում, զգնում, զրնկենում, ընկենում, ընդելում, ընթնում, ընթերցանք, ընկնում, ըստգտանք, բաֆնում, բռչիմ, բֆանք, իշանք, լիգանք, լուծանք, լուցանք, լֆանք, լնում, խածանք, կլանք, կլնում, կծանք, հարքնում, հարկանք, հարցանք, հասանք, հեծանիմ, հատանք, նանաչք, մածանիմ (մածենում), մեղանչք, մուծանք, մտանք, մատչիմ, մարտնչիմ, մեռանիմ, լագչիմ, լատանք, լառնք, լանգչիմ, լարկանիմ, լարնչիմ, ցուցանք, չիչանիմ, ոռոգանք, ունիմ, ուսանիմ, պակչիմ (պակնում), ջեռնում, սկսանիմ, սպանանք, ստեղծանք, սփածանիմ, տեսանք, փլանիմ, փլչիմ, փրծանիմ, ֆաղցնում, օծանք:

Անծանոթ են համարվում անցանք, անշատանք, արկանք, զբաղնում, զքոսնում, զգածնում, եղծանք, խրաչիմ (խրանում), խափնում, խնում, խփանք, կառչիմ, կորնչիմ, հանգչիմ, հերծանք, հեղանում, հիւծանիմ, յեռում, շրտնում, ուտչիմ, ուռնում, պակչիմ, պշնում, պրծանիմ, սուգանք, սարտչիմ, տանիմ, ցածնում, ցասնում, փախչիմ, պրծանիմ, փլչիմ (փլանիմ):

Բնիկ և անծանոթ համարված ածանցավոր բայերի հարաբերությունը համապատասխանաբար երկուս ու կես և մեկի հաշիվ է արտահայտում՝ այսինքն բնիկները երկուս ու կես անգամ ավելի են անծանոթներից: Մինչդեռ պարզ բայերի հարաբերությունը այդպես չէ. երեք օտարի դիմաց ունենք մեկ բնիկ բայ: Այսպիսի հարաբերությունը պատահական չէ: Մեր բնիկ և փոխառյալ արմատները մեկ տասի հարաբերությամբ են հանդես գալիս: մի բնիկ բառի դիմաց ունենք 10 բառ օտար: Եթե «Արմատական բառարանի» 11 հաղար արմատից հանենք անվավեր բառերը, արաբական, լատինական, նոր պարսկական, հունալատին, թուրք-թաթարական, նոր եվրոպական և այլ փոխառություններ՝ թվով մոտ 5000, ապա դարձյալ բնիկ և փոխառյալ արմատները մեկ առ վեց հարաբերությամբ են հանդես գալիս: Այս թվական համեմատությունները խոսում են այն մասին, որ այստեղ մի գաղտնի երևււթյուն կա: Ածանցավոր բնիկ բայերը երկուս ու կես անգամ ավելի են ոչ բնիկներից, պարզ բայերի ոչ բնիկները երեք-չորս անգամ ավելի են բնիկներից, իսկ բնահանուր փոխառությունները 6 անգամ գերազանցում են բնիկներին: Մեր խորին համոզմամբ ոչ մի ածանցավոր բայ (խոսքը չի վերաբերում ա խոնարհմանը) փոխառություն լինել չի կարող: Մեր բայերի ածանցները հատուկ են միայն բնիկ բայերին: Այդ ածանցները չեն կարող կալել փոխառյալ բառերին: Արկանել բայը Աճառյանը համարում է առաջացած իրանական հաթեօ ձևից, որ պարսկերենում չի պահված, կա միայն զենդերենում: Ինչպե՞ս կարող էին հայերը հաթեօ ձևը վերցնել ու դարձնել արկանել: այդպիսի ոչ մի դեպք չկա ողջ փոխառյալ բայերի համակարգում. հաթեօ նշանակում է մի կողմ նետել, դնել գցել. բնորոշ են, որ իսկապես արկանել-ը հաթեօ-ից է առաջացել, բայց այս դեպքում բայը շատ-շատ կլիներ արկել և ոչ թե արկանել: Արդեն Տերվիշյանը, Մելեն, Շեֆտելովիցը այս բայը ճիշտ կերպով բնիկ են համարել՝ կապելով հնդկ. satk արմատի հետ, որի

սանսկրիտը *sarī* է: Աճառյանը այս համեմատությունը մերժում է՝ ասելով, թե այդ դեպքում կունենայինք ալֆանել և ոչ թե արկանել: Մենք հնչյունական օրենքները ճիշտ ենք համարում, իսկ բծախնդրությունը՝ մերժում: Հնչյունական օրենքները այնքան բացառություններ ու շեղումներ են տալիս՝ անցնելով մի քանի հազար տարվա ժամանակաշրջան, որ դառնում են նյութը առանձին հնչյունական յուրահատկություններ ունեցող բարբառների ու խոսվածքների: Հենց ինքը Աճառյանը բազում բառի համար ասում է, որ ծագում է հնդեվ. *bhūng̃hu* ձևից, բայց սպասվում էր հայերեն բանձում: Գեղգեո բնիկ բառի մասին «Արմատականում» ասվում է. Ե¹ի հայերենում դառնում է ծ, Ծ²ի-ն դառնում է զ, բայց Ե-ի մոտ վերածվում է Զ-ի, ուստի այստեղ զեղզեղ-ի դեպքում գործ ունենք մի երրորդ տեսակի Ե¹ի-ի հետ և կամ ներկա ենք մի առանձին ձայնախոսական պարագայի, որի պայմանները մեզ հայտնի չեն: Այսպիսի օրինակներ շատ կգտնենք «Արմատականում», որտեղ բնիկ հայերեն բառը հաստատորեն ընդունվում է, սակայն հնչյունական ընդունված համապատասխանությունը խախտված է: Հայերենը, հնդեվրոպական նախալեզուն և մյուս ցեղակից լեզուները բազմաթիվ դարերի ընթացքում ներքին և արտաքին հնչյունական բազմազան գործոնների շնորհիվ կարող էին այնպիսի շեղումներ ունենալ, որ հակասեին Հյուբշմանի և այլոց սահմանումներին: Պետք է ընդունել, որ առկանել բայը նույն հատկանիշով, վարկանել բայերի մեկ փոփոխակն է, կամ ավելի ճիշտ այս վերջիններն են նախորդի փոփոխակները:

Յենում բայը համարված է անծանոթ փոխառություն կամ ծագումը անհայտ: Օտար արմատը պետք է լիներ յեն, որովհետև լե արմատի վրա ն անծանցը չէինք կարող դնել, իսկ եթե արմատը յեն է, ապա անցյալ կատարյալում օտար արմատը չէինք կարող քանդել և դարձնել յեգ, հետո էլ այդ յեգի վրա ն դնեինք ու դարձնեինք նեցուկ². օտար բառերի հետ այդպիսի խաղեր ոչ մի ժամանակ չեն խաղացվում. միայն բնիկ այն³ արմատը (որ մնացել է Մշո բարբառում) կարող էր դառնալ հայել, նայել և յենում, բնիկ բայը կդառնար յեցալ-նեցուկ, հիւք-ը կտար նիւք: Այդպես էլ օտար իւնում-ը չի դառնա խցի, զգածնում՝ զգածայ, կառչիմ՝ կառեայ, կորնչիմ-կորեայ, հանգչիմ՝ հանգեայ, պակչիմ՝ պակեայ, պշնում՝ պշնայ՝ տանիմ՝ տաւայ և այլն: Հայերենի փոխառյալ բայերը այսպիսի օրինակներ չեն տալիս, և չենք կարծում, որ մի այլ լեզվի հատուկ լինի լեզվական այսպիսի մի երևույթ, որ օտար արմատը մի քանի արմատական փոփոխությունների ենթարկվի. ներկայում այլ հիմքով հանդես գա, անցյալ կատարյալում մի այլ հիմքով: Այս երևույթները հատուկ են միայն բնիկ բառերին:

Ստուգաբանները ներքնատեսությամբ մեր ածանցավոր բայց օտար համարված բայերից մի քանիսը արդեն ստուգաբանել են: Աճառյանը իջանել բայի Լջ արմատը հետազայում համարում է բնիկ հայերեն՝ կապելով ուս-իձի ձևի հետ: Անցանեմ անծանոթ համարված բայի մասին ասված է, որ

² Նեցուկ բառը Գ. Զահուկյանը կապում է հնդեվ. *nik*, հնդկ. *nicā* (ցած, դեպի ցած) արմատի հետ:

³ Որքան մեղ հայտնի է այն իրրև նախնական ձևը հայել և նայել բայերի ոչ մի տեղ չի հիշատակված:

կապվում է սանսկրիտի anṣ, զենդ. ač, հնդկ. aṣ-s, լատ. oxis, լիթվ. aszis, հին սլավ. ocb, հուն. ἄξον, հին բարձր գերմաներեն ahsa, գերմ. Achse:

Իսկ Զահուկյանը այդ նույն բայը նույնպես բնիկ համարելով, առնչում է հունարեն $\alpha\iota$ (զնալ) բային և խեթ. iia (զնալ) բային⁴:

Նորագույն քննությունները անց արմատը ևս բնիկ են համարում: էդ. Աղայանը անց արմատը ծագած է համարում հնթ. sent (գիմել, զնալ, ընթանալ, անցք, ճանապարհ), որի ցեղակիցներն են ավեստ. hant, հին իռլ. sēt, կիմեր. hint և այլն⁵:

Տվյալ պարագայում շենք կարող ասել հին և նոր ստուգաբանություններին որն է ձիշտ, սակայն փաստը այն է, որ անցանքն ածանցավոր բայը բնիկ հայերեն է:

Ատանքն բայը համարված է անծանոթ, բայց բաղմաթիվ ստուգաբաններ այդ բայը համարել են բնիկ՝ կապելով ցեղակից լեզուների մի շարք արմատների հետ: էդ. Աղայանի նոր մեկնությամբ հատ արմատը կապվում է լատ. pavio, հին բարձր գերմ. urfur, անգլո-սաքս. a-turan և այլ լեզուների համապատասխան արմատների հետ: Ստուգաբանական այս քննությունից բացի հատ արմատը այնպիսի ձևափոխություններ է տալիս, որոնք հատուկ չեն փոխառյալ բայերին, հատ-ից ունենք առ ածանցը, զատ, հոտ, յոտ, լատ. նհատ (պակաս, թերի):

Անծանոթ է համարված նաև զգածնում բայը, որը պրոֆ. Ղափանցյանը մի կես դար առաջ կապում էր գոտի բառի հետ՝ բերելով գաւո-գած, ամաւթ-ամաշ, ծանաւթ-նանաշ, մաւտ-մատ զուգահեռ ձևերը իբրև հայերենին հատուկ ձայնդարձային և հնչյունաբանական երևույթներ, որոնք փոխառյալ բառերի մեջ երբեք տեղի չեն ունենում: Ընդունելով պրոֆ. Ղափանցյանի այս խորամիտ բացատրությունը՝ պրոֆ. էդ. Աղայանը հաստատում է, որ գած (գոտի) արմատը բնիկ հայերեն է և առնչվում է հնթ. veg (հյուսել, հանգուցել, հյուսվածք, գործվածք) արմատի հետ, որի ցեղակիցներն են լատ. velum, գերմ. wickeln, անգլո-սաքս. wōkig և այլն⁶: Մեկի կարծիքը Աղայանը հաստատում է նոր քննությամբ:

Ցածնում բայի ցած արմատը դեռևս Շեֆտելովիցը համեմատել է լատ. cado, սանսկր. cad, զենդ. sad արմատների հետ, որոնք նշանակում են ընկնել, իսկ Վալդեն և Պոկորենին ընդունել են այդ բացատրությունը: Աճառյանը ցած բայը բնիկ չի համարել, որովհետև ըստ նրա այս պարագային պետք էր սպասել սատ կամ սած: Մեծ հայագետը մոռացել է, որ հայկական հողի վրա են առաջացել ցասում-սասում, սեպ-շեպ, սասանել-ծածանել և նման բաղմաթիվ հնչյունափոխական երևույթներ: Շատ ուրախալի է, որ ժամանակակից ստուգաբանները արդեն այդպիսի բայերից մի բանիսը համարում են հնդեվրոպական և կապում են ցեղակից լեզուների հետ. օրինակ խւտնում, խւտչիմ բայը առնչվում է հուն. $\chi\omega\tau\tau\omega$ բառին, խլիանքն-ը խեթ. $\chi u r$

⁴ Գ. Բ. Զահուկյան, Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Երևան, 1970, էջ 113, 114:

⁵ Տե՛ս է. Բ. Աղայան, Բառաբանական և ստուգաբանական հետազոտություններ, Երևան, 1974, էջ 19:

⁶ Նույն տեղում, էջ 49:

huuapp, հանգչիմ, խեթ. hink, փախչիմ խեթ. parh⁷: Այս համեմատությունները ճիշտ են թե սխալ, այդ ապագան կպարզի, բայց հավաստին այն է, որ հիշյալ ածանցավոր բայերը բնիկ հայերեն են:

Եղրականություն. Հայերենի և, ի, ու խոնարհման ածանցավոր բայերը բոլորը բնիկ հայերեն բառեր են, որովհետև ա. դրանք երկու հիմքերով են հանդես գալիս խոնարհման մեջ և հաճախ հիմքերը միմյանցից հնչյունաբանորեն բավականաչափ տարբեր են. օրինակ՝ տանիմ-տաբայ, լենում-լեցայ, խնում-խցի, կոռնչիմ-կոռեայ. օտար ոչ մի փոխառություն չի կարող այսպիսի փոփոխություն կրել. այսպիսի նրևույթ բացառված է օտար արմատների նկատմամբ. դա հատուկ է միայն հայերեն բառերին:

բ. Հայերենի անծանոթ համարված հիշյալ ածանցավոր բայերի արմատները հաճախ ունեն ձայնդարձային այնպիսի երևույթներ, որոնք հատուկ են միայն հայերենին, կապված են նրա բնիկ արմատների հետ և խորթ ու օտար են փոխառությունների համար: Օրինակ՝ զգածնում-զած-զատ, հատանեմ-հատ, յօտ, յատ, ատ, նհատ, լենում-լեցա-նեյուկ և այլն:

դ. Ե, ի, ու խոնարհման ածանցները եղել են միջաժանցներ և բոլոր փոխառություններից առաջ դրանց բերականական իմաստները մթնել են, ուստի դրանք չէին կարող կցվել փոխառյալ բառերին, որոնցից բայեր են կազմվել առանց այդ ածանցների: Այդ են ցույց տալիս իրանական, ասորական, հբրայական, հունական և այլ հայտնի լեզուներից կատարված փոխառությունները, որոնցից կազմված ոչ մի բայ չունի հիշյալ ածանցները և չէր կարող ունենալ:

դ. Հիշյալ ածանցավոր բայերը մեծ տարածում ունեն հայերենում. ոչ միայն գրական են, այլև հանդես են գալիս բարբառներում բաղմաթիվ ձևափոխություններով, աճումներով ու ածանցումներով. յանցանք (անցանեմ), զանցանք, զանց առնել, անցուցք, առանց, զառանցել, անցվոր և այլն:

և. Ածանցավոր բայերից բնիկները անծանոթ համարված նույնպիսի բայերից երկուս ու կես անգամ ավել են. այդպիսի հարաբերություն մեր ոչ մի բառախմբի մեջ չենք գտնի:

դ. Անծանոթ համարված ածանցավոր բայերի իմաստային զաշտերը շափազանց ընդարձակ են. այդպիսի ընդարձակություն փոխառությունները սակավ են հանդես բերում. օրինակ արկանել բայը, որ համարվում է անծանոթ, ավելի քան երկու տասնյակ իմաստ ունի և այդ իմաստները այնպես են ճառագայթաձև հեռացած միմյանցից, որ համարյա դարձել են նույնանուն բայեր. արկանել-նետել և արկանել-հագնել. արկանել-զրկել (յարևէ արկանել) և արկանել կառուցել (պատնէշ արկանել) և այլն:

է. Կազմում են բաղմաթիվ դարձվածքային ճոխ միավորներ, որոնք մեր լեզվի կենդանի ոգին և բառային լայնածավալ ընդարձակությունն են արտահայտում:

КАТЕГОРИЯ ЗАЛОГА И ГЛАГОЛЬНЫЕ АФФИКСЫ В ДРЕВНЕАРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Доктор филол. наук В. Д. АРАКЕЛЯН

(Резюме)

До V в. залог глагола в древнеармянском языке имел особые показатели. Эти глагольные аффиксы в исторический период утратили свою роль и сохранились лишь в качестве основообразующих частиц, по той причине, что преобладающим аффиксом глагола был показатель среднего залога. Следовательно, глагольные аффиксы первоначально были показателями залога. Из инфиксов они посредством метатезы превратились в суффиксы. Частицы такого рода свойственны глаголам индоевропейского происхождения. Как инфиксы они давно уже вымерли и перестали быть действующими аффиксами, между тем такие аффиксы у глаголов на -а- до сих пор являются действующими частицами. Поэтому глаголы, содержащие эти вымершие частицы, являются исконно армянскими глаголами.